



ՀՀ Գորիս համայնքի
Համայնքապետ
Պարոն Առուշ Առուշանյանին
«Իրական դպրոց Գորիս» հիմնադրամի
Տնօրեն Արտուր Խոջաբաղյանից

Դիմում

Բ. Գորիս
7 մարտ, 2024

Հարգելի պարոն Առուշանյան,

«Իրական Դպրոց Գորիս» հիմնադրամի աջակցությամբ Գորիսում գործում է համանուն միջին մասնագիտական հաստատություն, որը լրացնում է Գորիսը տեխնոլոգիական կենտրոն դարձնելու կրթական բացը՝ նպատակ ունենալով դառնալ տեխնոլոգիական ոլորտի բովանդակային առանցքային մասը:

Իրական դպրոցի կարգախոսն է՝ գործ ու փորձ, որը հստակ կերպով արտահայտում է դպրոցի առաքելությունը:

Այստեղ ուսուցումը տեղի է ունենում իրական նախագծերի միջոցով, որոնց ընթացքում ուսանողները բախվում են իրական և մեծ կյանքի հետ կապված մի շարք խնդիրների, մշակում լուծումներ դրանց համար:

Կրթությունը պետական չափորոշիչների շրջանակում անց կացնելու նպատակով մեզ անհրաժեշտ է շուրջ 100 ք.մ. տարածք, որտեղ հնարավոր կլինի իրականացնել ֆիզկուլտուրայի դասերը:

Խնդրում ենք օժանդակել եւ տրամադրել համապատասխան տարածք:

Հարգանքով

Արտուր Խոջաբաղյան

